ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 49

«05» 06 2018թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 20 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և այն իրականացնելու ոլորտում աշխատանքները կանոնակարգելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 56-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 30-ի՝ «Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 20 հրամանը:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի հունիսի 5-ի
թիվ «48» հրամանի

ԿԱՐԳ

Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը (այսուհետ՝ կարգ), կարգապահական տույժեր կիրառելու կարգն ու պայմանները, ինչպես նաև կարգապահության հետ կապված այլ հարաբերություններ:

2. Կարգապահությունը դատախազությունում հիմնվում է դատախազության յուրաքանչյուր պաշտոնյայի կողմից իր պաշտոնեական պարտականությունների կատարման և դատախազի վարքագծի կանոնների պահպանման համար անձնական պատասխանատվության գիտակցման վրա:

3. Կարգապահական վարույթը հարուցվում և իրականացվում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ օրենք), դատախազի վարքագծի կանոններին, աշխատանքային օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին, ինչպես նաև սույն կարգին համապատասխան:

II. Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը

4. Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերն են՝

1) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,

2) դատախազի վարքագծի կանոնները խախտելը,

3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը,

4) օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

5. Դատախազի նկատմամբ կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական վարույթ հարուցում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը (այսուհետ՝ գլխավոր դատախազ)՝

1) իր նախաձեռնությամբ,

2) սույն կարգի 7-րդ կետով նախատեսված՝ դատախազների միջնորդությունների հիման վրա,

3) ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա,

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին դիմելու մասին դատարանի սանկցիայի հիման վրա:

6. Դատախազի նկատմամբ կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական վարույթ հարուցում է գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների հիման վրա,

2) զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա:

7. Կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ գլխավոր դատախազին միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեն՝

1) գլխավոր դատախազի տեղակալը՝ իր համակարգման ոլորտում գտնվող դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

2) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը՝ տվյալ ստորաբաժանման դատախազների կատարած կարգապահական խախտումների համար, ինչպես նաև օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերում.

3) զինվորական դատախազը՝ զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

4) Երևան քաղաքի դատախազը՝ Երևան քաղաքի դատախազության դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

5) Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը՝ տվյալ վարչական շրջանի դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

6) մարզի դատախազը՝ տվյալ մարզի դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

7) կայազորի զինվորական դատախազը՝ կայազորի զինվորական դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար:

8. Կարգի 7-րդ կետում նշված միջնորդությունները, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումները, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներն ինքնին կարգապահական վարույթ հարուցելու հիմք չեն:

9. Եթե սույն կարգի 8-րդ կետում նշված առիթներում առկա փաստական տվյալները բավարար չեն կարգապահական վարույթ հարուցելու համար և պահանջում են լրացուցիչ

ուսումնասիրություններ, ապա գլխավոր դատախազի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունում (այսուհետ՝ վարչություն) կատարվում են ուսումնասիրություններ, որի արդյունքները զեկուցագրով ներկայացվում են գլխավոր դատախազին:

10. Եթե սույն կարգի 6-րդ կետում նշված առիթներում առկա փաստական տվյալները բավարար չեն կարգապահական վարույթ հարուցելու համար և պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ, ապա գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի նախագահը, գլխավոր դատախազի համաձայնությամբ, ստացված հաղորդումներն ու հրապարակումներն ուսումնասիրություն կատարելու համար ուղարկում է վարչություն: Ուսումնասիրության արդյունքները զեկուցագրով ներկայացվում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը:

Էթիկայի հանձնաժողովը քննարկում է եզրակացությունը և կայացնում համապատասխան որոշում:

11. Սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերում նախատեսված ուսումնասիրությունն իրականացվում է դրա նշանակումից սկսած 30-օրյա ժամկետում:

12. Ուսումնասիրության ժամանակ ուսումնասիրություն իրականացնող անձն իրավասու է կատարել սույն կարգի 18-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նախատեսված գործողությունները:

13. Կարգապահական վարույթ հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերելու օրվանից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամսվա ընթացքում:

14. Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում դատախազի լիազորությունները կարող են կասեցվել մինչև տվյալ վարույթով վերջնական որոշման ընդունումը:

III. Կարգապահական վարույթ իրականացնելը

15. Իր կամ էթիկայի հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման հիման վրա, գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում ստեղծում է դատախազներից կազմված կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբ (այսուհետ՝ հանձնախումբ) և հանձնարարում իրականացնել կարգապահական վարույթ: Անհրաժեշտության դեպքում կարգապահական վարույթի իրականացումը կարող է հանձնարարվել մեկ դատախազի:

16. Կարգապահական վարույթի ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

1) կարգապահական խախտման դեպքը և կատարման հանգամանքները (կատարման ժամանակը, եղանակը և այլն),

2) կարգապահական խախտման կազմի տարրերը,

3) կարգապահական խախտում ծնող պատճառները և դրանց նպաստող պայմանները:

Կարգապահական վարույթ հարուցելու որոշման հիման վրա՝ հանձնախմբի կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազի միջոցով իրականացվում է կարգապահական վարույթ:

17. Կարգապահական վարույթի հարուցման որոշման մասին դատախազին հաղորդվում է այն կայացնելու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում:

18. Կարգապահական վարույթ իրականացնելիս հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը լիազորված է՝

1) սահմանված ժամկետում անցկացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ կատարված գործողություններին տալով համապատասխան փաստաթղթային ձևակերպում՝ եզրակացություն,

2) բացատրություններ վերցնել այն դատախազներից, որոնք կարող են կարգապահական խախտման հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն տալ,

3) առաջարկել բացատրություններ տալ այն անձանց, որոնք կարող են կարգապահական խախտման հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն տալ,

4) ուսումնասիրել խախտման փաստին առնչվող քրեական, քաղաքացիական, կարգապահական կամ վարչական վարույթի նյութերն ու դատախազության տնօրինության տակ գտնվող այլ փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում դրանց կրկնօրինակները կցել վարույթի նյութերին,

5) կարգապահական խախտման փաստի առնչությամբ հարցումներ անել համապատասխան իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ մարմիններին,

6) միջնորդություն ներկայացնել գլխավոր դատախազին՝ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կարգով դատախազի լիազորությունները կասեցնելու վերաբերյալ՝ մինչև տվյալ վարույթով վերջնական որոշման ընդունումը,

7) մինչև կարգապահական վարույթի ավարտը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող դատախազին ծանոթացնել կարգապահական վարույթի նյութերին, ներառյալ՝ եզրակացությանը, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տվյալների,

8) իր իրավասության սահմաններում լուծել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող դատախազի միջնորդությունները:

Հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը յուրաքանչյուր դեպքում գլխավոր դատախազի կողմից կարող է օժտվել օրենսդրության պահանջներին չհակասող այլ լիազորություններով:

19. Առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազն իրավունք ունի՝

1) ծանոթանալ իր իրավունքներին և պարտականություններին,

2) իմանալ, թե ինչ կարգապահական խախտում է իրեն վերագրվում, պարզաբանում տալ իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ,

3) միջնորդություններ ներկայացնել կարգապահական վարույթի ընթացքում առանձին գործողություններ կատարելու համար, ինչպես նաև ներկայացնել նյութեր, իր պարզաբանումները հիմնավորող փաստական տվյալներ՝ կարգապահական վարույթի նյութերին կցելու համար,

4) բացարկ հայտնել կարգապահական վարույթ իրականացնող անձին, եթե կան հիմքեր ենթադրելու, որ կարգապահական վարույթ իրականացնող անձը ուղղակի կամ անուղղակի շահագրգռված է կարգապահական վարույթի ելքով: Տվյալ դեպքում բացարկը լուծում է գլխավոր դատախազը,

5) մինչև կարգապահական վարույթի ավարտը ծանոթանալ կարգապահական վարույթի նյութերին, ներառյալ՝ կարգապահական վարույթի արդյունքներով կազմված եզրակացությանը,

6) կարգապահական վարույթի ընթացքի, նյութերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ և միջնորդություններ,

7) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

20. Առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազը պարտավոր է՝

1) հանձնախմբի ղեկավարի կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազի պահանջով ներկայանալ կարգապահական վարույթի իրականացման վայր և տալ գրավոր բացատրություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև լրացուցիչ բացատրություն, մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների և ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրության (տեղեկանքի) ճշտությունը, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) հանձնախմբի ղեկավարի կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազի պահանջով ներկայացնել իր մոտ եղած փաստաթղթերը, առարկաներն ու նյութերը:

21.Կարգապահական վարույթի ընթացքը և արդյունքներն արձանագրվում են, որի հիման վրա կազմվում է եզրակացություն:

Կարգապահական վարույթի հիմքում չեն կարող դրվել օրենքի և սույն կարգի պահանջների խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալներ:

22. Կարգապահական վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչական շենքում:

Սույն կարգով սահմանված գործողությունները կարգապահական վարույթի ընթացքում կարող են կատարվել նաև այլ վայրերում:

23. Կարգապահական վարույթի տևողությունը՝ կարգապահական վարույթ հարուցելու օրվանից հաշված, չի կարող գերազանցել 21 օրը, բացառությամբ կարգապահական ստուգումների, դատախազի՝ հարգելի պատճառով բացակայության, հիվանդության, գործուղման դեպքերի, ինչպես նաև առերևույթ կարգապահական խախտում կատարած դատախազի վերաբերյալ քննվում է քրեական գործ: Այս դեպքում կարգապահական վարույթի տևողությունը վարույթ հարուցած անձի կողմից կարող է երկարաձգվել համապատասխանաբար մինչև 12 ամիս ժամկետով:

Հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը կարգապահական վարույթ իրականացնելիս սահմանափակվում է կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացող փաստաթղթերում նշված հանգամանքների ստուգմամբ և պարզաբանմամբ:

Նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում դրանք նույնպես ստուգվում և պարզաբանվում են՝ այդ մասին նախապես զեկուցելով գլխավոր դատախազին:

24. Կարգապահական վարույթը ցանկացած փուլում դադարում է, եթե՝

1) առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ կասկածվող դատախազը մահացել է և կարգապահական պատասխանատվության ենթակա այլ դատախազներ չկան.

2) լրացել է սույն կարգի 23-րդ կետով նախատեսված՝ կարգապահական վարույթի երկարաձգման առավելագույն ժամկետը:

Կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը կարգապահական վարույթը դադարելու վերաբերյալ կազմում է եզրակացություն, որը ներկայացնում է գլխավոր դատախազին:

25. Կարգապահական վարույթի ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում, նյութերը համապատասխան զեկուցագրով ներկայացվում են գլխավոր դատախազին:

26. Կարգապահական վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարությամբ այն հանձնում է հանձնախմբին կամ յոթնօրյա ժամկետում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է լինել նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7-օրյա ժամկետում էթիկայի հանձնաժողովի քննարկմանը չներկայացվելու դեպքում կարգապահական վարույթը դադարում է:

IV. Էթիկայի հանձնաժողովում կարգապահական վարույթի նյութերի քննարկումը

27. Հանձնաժողովում քննարկումը կատարվում է կարգապահական վարույթի նյութերը հանձնելու օրվանից 1 շաբաթվա ընթացքում:

28. Հանձնաժողովի այն դատախազ անդամը, որի վերաբերյալ հարցը ներկայացվել է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը, չի մասնակցում այդ քննարկմանը: Եթե այդ անդամը հանձնաժողովի նախագահն է, ապա էթիկայի հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ հանձնաժողովի անդամներից ընտրում է էթիկայի հանձնաժողովի ժամանակավոր նախագահ:

29. Հանձնաժողովը կարգապահական խախտման հետ կապված հարցը քննելիս գաղտնի քվեարկությամբ որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ դատախազի մեղավորության հարցը, իսկ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու մասին միջնորդություն ներկայացրած լինելու դեպքում՝ նաև այն նշանակելու հնարավորության հարցը:

30. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարգապահական վարույթի արդյունքներով ձեռք բերված փաստական տվյալները գնահատում է իր ներքին համոզմունքով՝ դրանց բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ հետազոտման հիման վրա:

Հանձնաժողովի նիստում կարգապահական վարույթի նյութերը ներկայացնում է կարգապահական վարույթ իրականացրած հանձնախմբի ղեկավարը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը: Վերջինս, ինչպես նաև հանձնախմբի մյուս անդամները պարտավոր են պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին:

31. Գլխավոր դատախազի կողմից «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարց առաջադրելու դեպքում, հանձնաժողովը որոշում է նաև այդպիսի տույժ կիրառելու հնարավորության հարցը:

32. Կարգապահական խախտում թույլ տալու մեջ մեղադրվող դատախազն իրավունք ունի ներկա գտնվել և բացատրություն տալ իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ: Հանձնաժողովի նախագահի պահանջով կամ հանձնաժողովի համապատասխան որոշման առկայության դեպքում դատախազը պարտավոր է ներկա գտնվել նիստին:

33. Հանձնաժողովում հարցի քննարկման արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) կարգապահական խախտման փաստի բացակայության մասին.

2) կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին.

3) կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության բացակայության մասին:

34. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն ներկայացրած լինելու դեպքում, հանձնաժողովը որոշում է կայացնում բացասական կամ դրական եզրակացություն տալ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ:

35. Կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու, ինչպես նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ դրական եզրակացություն ներկայացնելու դեպքում, գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում նշանակում է օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական տույժի տեսակներից մեկը:

36. Կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու և «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում, գլխավոր դատախազը կարող է նշանակել «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժի տեսակը:

37. Դատախազը կարող է դիմել հանձնաժողովին՝ դատախազի վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ ստանալու խնդրանքով:

V. Կարգապահական տույժ նշանակելը

38. Գլխավոր դատախազը օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով տույժ նշանակում է միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վրա՝ եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում:

39. Գլխավոր դատախազը «պաշտոնից ազատում» կարգապահական տույժը գլխավոր դատախազի տեղակալների և դատախազների նկատմամբ նշանակում է էթիկայի հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

40. Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների նկատմամբ «Դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը գլխավոր դատախազի ներկայացմամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

Գլխավոր դատախազի նկատմամբ «Դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

41. Կարգապահական տույժի նշանակման որոշման մասին դատախազին հաղորդվում է այն կայացնելու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում:

42. Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ, եթե նույն դատախազը կատարել է մի քանի կարգապահական խախտում, դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

43. Նշանակվող կարգապահական տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին:

44. Դատախազի նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր և հանձնվում գլխավոր դատախազության անձնակազմի բաժին՝ անձնական գործում հաշվառելու համար:

45. Կարգապահական տույժի ենթարկված դատախազը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

46. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել դատախազի այնպիսի արարք կատարելու դեպքում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը կամ անհամատեղելի է դատախազի պաշտոնի հետ:

47. Դատախազը կարգապահական խախտում կատարելու մեջ համարվում է անմեղ, քանի դեռ նրա նկատմամբ իրավասու անձը սույն կարգով սահմանված կարգով չի նշանակել կարգապահական տույժ:

48. Կարգապահական տույժ նշանակելու լիազորություն ունեցող անձի որոշմամբ կարգապահական խախտում կատարած դատախազը կարող է ազատվել կարգապահական տույժից, եթե նման արարք կատարել է առաջին անգամ, անկեղծորեն զղջացել է և կամավոր հատուցել իրավախախտմամբ պատճառված վնասը:

49. Առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ կասկածվող դատախազը մինչև նրա վերաբերյալ կատարվող կարգապահական վարույթի ավարտը չի կարող տեղափոխվել, նշանակվել նոր պաշտոնի, ստանալ հերթական դասային աստիճանը, իր նախաձեռնությամբ ազատվել դատախազությունում պաշտոնից:

VI. Կարգապահական տույժը հանելը և վերացնելը

50. Եթե դատախազը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող:

51. «Պաշտոնից ազատում», «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կամ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժեր նշանակվելու օրվանից վեց ամիս անցնելուց հետո անձի նախկին կարգավիճակը չի վերականգնվում, բացառությամբ հերթական ատեստավորման, իսկ գլխավոր դատախազի որոշմամբ՝ նաև արտահերթ ատեստավորման արդյունքների հիման վրա:

52. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կամ հանձնաժողովի որոշմամբ կարգապահական տույժ ունեցող դատախազի նկատմամբ որպես խրախուսում կարող է կիրառվել կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը, բացառությամբ «պաշտոնից ազատում», «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով», «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերի:

53. «Պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կամ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերի նշանակման դեպքում, վեց ամիս անցնելուց

հետո, նախկին պաշտոնում կամ դրան համարժեք այլ պաշտոնում կամ նախկին դասային աստիճանի վերականգնումը կարող է իրականացվել դատախազների հերթական ատեստավորման, իսկ գլխավոր դատախազի որոշմամբ՝ նաև արտահերթ ատեստավորման արդյունքների հիման վրա:

VII. Կարգապահական տույժը բողոքարկելը

54. Դատախազն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումը օրենքով սահմանված կարգով բողոքարկել դատարան: